ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Համագործակցություն տղամարդկանց և տղաների հետ՝ հանուն գենդերային հավասարության» խորագրով տարածաշրջանային համաժողովին մասնակցելու նպատակով՝ Նոյեմբերի 26-28 Բելառուսի Հանրապետություն (Մինսկ) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.** Արսեն Մանուկյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.** ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Բելոռուս, Մինսկ, Նոյեմբերի 26-28

4. **Հրավիրող կողմը.**
   Հայաստանում ՄԱԿ-ի ժողովրդագրության ծրագիր

5. **Գործուղման նպատակը** */աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/.*

Մասնակցել 2018թ. նոյեմբերի 27-ին, Բելոռուսի մայրաքաղաք Մինսկում կայանալիք «Տղամարդկանց և տղաների մասնակցությունը Կանանց հավասարության ապահովման գործում» թեմայով տարածաշրջանային կոնֆերանսին:
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության խնդիրներից է, որպես լիազոր մարմին, նպաստել Հայաստանում կանանց և տղամարդկանց միջև հավասար հնարավորությունների ապահովմանը, կանանց դերի ակտիվացմանը և ներգրավվածության մեծացմանը Հայաստանի սոցիալական տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում: Ներկայումս շրջանառության մեջ է գտնվում Հայաստանի Հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը:
Հայաստանում կանանց ներուժը մնում է ամբողջովին չիրացված:

6. **Քննարկված թեմաները.**

   Արևելյան Եվրոպայի, Մերձբալթյան և նախկին ԽՍՀՄ երկրների 20 ներկայացուցիչներ ներկայացրեցին, թե ինչ քայլեր կամ միջոցառումներ են

իրականացվում իրենց երկրներում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովման, սոցիալ-տնտեսական կյանքում կանանց ներգրավվածությունը մեծացնելու համար, և դրանում ինչպիսի մասնակցություն ունեն տղամարդիկ:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
Մասնակցել եմ Կոնֆերանսի աշխատանքներին, վարել եմ կոնֆերանսի 2-րդ նիստը: Նոյեմբերի 27-ին ունեցել եմ հանդիպում Բելոռուսի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական պաշտպանության Նախարարի տեղակալ Վ.Կովալկովի հետ, ում հետ քննարկել ենք Նախարարությունների միջև համագործակցության և տեղեկատվության փոխանակության հարցեր՝ կանանց և տղամարդկանց հավասարության ապահովման, ընտանեկան բռնության դեմ պայքարի մեխանիզմների և պրակտիկայի վերաբերյալ: Նոյեմբերի 28-ին հանդիպում եմ ունեցել Բելոռուսի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ղևոնդյանի հետ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Գործուղման ընթացքում փաստաթուղթ չի ստորագրվել, որոշումներ չեն ընդունվել:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

1. Կանանց ներուժի օգտագործում և տնտեսական ակտիվության խթանում, առավել ներգրավվածություն Հայաստանի Հանրապետության տնտեսությունում և մնացած ոլորտներում:

2. ՀՀ աշխատանքային օրենսգրքի փոփոխություններ՝ առավել ճկուն կարգավորումներ կանանց համար նրանց տնտեսական ակտիվությունը խթանելու նպատակով, մասնավորապես, կանանց համար ճկուն աշխատանքային ռեժիմ տրամադրման հնարավորություն կամ աշխատանք տնից:

3. Տղամարդկանց առավել ներգրավվածություն ընտանեկան և երեխաների խնամքի գործերում, որպեսզի կանայք հնարավորություն ունենան զբաղվել տնտեսական գործունեությամբ

4. Հայրական արձակուրդի նախատեսում ՀՀ աշխատանքային օրենսգրքում՝ երեխայի ծննդյան դեպքում

5. Դասընթացներ ավագ դպրոցում և ԲՈՒՀ-երում ներդաշնակ ընտանիքի հասկացության, ամուսինների փոխադարձ պարտավորությունների վերաբերյալ:

6. Աշխատանք գործատուների հետ՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերով, գործատուների ինքնագնահատման

գործընթացի ներդրում, արդյոք իրենք ապահովում են գենդերային հավասարությունը աշխատանքային հարաբերություններում:

Վերոնշյալ խնդիրների և գործողությունների իրականացման պատասխանատուն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է և պետական այլ լիազոր մարմինները՝ իրենց լիազորությունների շրջանակում: Դրանք ներառվելու են Հայաստանի Հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագրում:

Ակնկալվում է, որ այդ միջոցառումների արդյունքում կստեղծվեն նախադրյալներ կանանց ներգրավվածությունը Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքում մեծացնելու և կանանց ներուժը լիարժեք օգտագործելու համար:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

03.12.2018թ.